ֆր·ի մետաքս, ընդ ամենը 25½ միլիոն ֆր·ի ապրանք։)

—Սօֆիա, 15 դեկտ.— Սոպրանյեն Նիստը դադրեցուց Նախորդ Էկզարքը Անթիմոս Մետրապոլտին մահուան առթիւ, և յանձնախումբ մը կարգեց՝ ի դիմաց Ժողովոյն Ներկայ գտնուելու յուղարկաւորութեան, որ ի Վիտին տեղի պիտի ունենայ։ Իշխանին կողմէ իւր Թեկնապահը պիտի երթայ։ (Անթիմոս Էկզարքին օրով էր որ Պուլկարիոյ քաղաքական նոր կացութիւնն հաստատեցաւ։)

—Փարիզ, 15 դեկտ.— Ատրճանակով մենամարտ մը տեղի ունեցաւ ընդ մէջ Պ. Փլէքանոյի և Նախորդ Երեսփոխան Պ. Մօրէլի։ Պ. Փլէքանոս թեթեւապէս վիրաւորեցաւ ուսէն։

—Քէօլնիշէ Զայթունկ կ'իմանայ թէ Պարսկաստան Մէշէտի ռուս հիւպատոսութեան խնդրոյն մէջ գոհացում տըւեր է Ռուսիոյ։

—Լորտ Սալզպըրի յայտարարեց Լորտերու Ժողովոյն մէջ թէ, Թէպէտ Սըր Հ. Տրըմընտ Ուոլֆ ճարտար դիւանագէտ մ'է, բայց լոկ իւր ճարտարութեան արդիւնքը չէ Պարսից դռան միջազգային նաւարկութեան առջեւ բացուիլն։ Այս բան մեծապէս արդիւնք է Վեհ. Շահին յառաջդիմասէր ոգւոյն։

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

LE PETIT FAUST

## ԴՐԱՄԱԳԱՆ

